<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

Հարգելի Մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ 2015 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նշված ապրանքները:Սույն հրավերի ծածկագիր է հանդիսանում ԲՊ-ՇՀԱՊՁԲ-11/15: Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Հաղթանակի 25 վարչություն հասցեով մինչև 2015թ. Փետրվարի 3-ը, ժամը 11.00-ն:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հարությունյանը:Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ծրարի վրա նշելով գրանցման համարը,օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք.Գյումրի,Հաղթանակի 25 վարչություն հասցեում,<<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա >> ՓԲԸ-ի վարչական սենյակում, 2015թ. փետրվարի 3-ին, ժամը 11.00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար՝քիմիական նյութերի ձեռքբերումը՝/1-21չափաբաժիններ/:

Քիմիական նյութերի մատակարարման տեխնիկական բնութագրերը,ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը,տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը,որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N1հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել << ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում <<Շրջանակային համաձայնագրեր>> բաժնի <<Հրավերում կատարված փոփոխություններ>> ենթաբաժնում ):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ berlinhosp@mail.ru:/հեռ.5-51-33/

Հարգանքով

Տնօրեն՝ Գ.Ալթունյան

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
ԲՊ-ՇՀԱՊՁԲ 11/15 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

____________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

____________________-ի կողմից N __________ ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի ____________________ չափաբաժնին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

____________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

____________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

____________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

____________________:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

____________________ __________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«___» ______ 20__թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ԲՊ- ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ________________ ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի

նախագիծը, ________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| … | … | | | |
| … | … | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

________________________________ ________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«____» __________ 20___թ.

(ամսաթիվը, ամիսը)

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ԲՊ-ՇՀԱՊՁԲ-11/15>>

ք. Գյումրի << >> << >> 2015թ.

<<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա >>ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Ալթունյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ ), մի կողմից, և -----------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----------------------ի (այսուհետև՝Վաճառող,մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված քիմիական նյութերը /այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար :

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի սույն այմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը. ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը / լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաեւ սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հաստատող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման / կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _______________ (_____________________________________________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ լրացուցիչ համաձայնագրով կնքված վճարման ժամանակացույցի համաձայն, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն

հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, **սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:**

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N3/:

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գնաձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի N 1 հավելվածով նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Եթե մեկ տարվա ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,ապա պայմանագիրը դառնում է առոչինչ:-

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Վաճառողին հաղթող ճանաչելու / ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որ չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:: Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանգրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 հավելվածները բաղկացած ___ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքնչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող թոխքնցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ | ------------------- |
| Ք. Գյումրի Հաղթանակի 25 | ---------------------- |
| Հ/Հ 247260002750 | ------------------------- |
| Արդշինբանկի Գյումրի մ/ճ | |
| ՀՎՀՀ 05503375 | |
| Տնօրեն՝ Գ. Ալթունյան | --------------------------------- |
| --------------------------------- | (ստորագրություն) |
| (ստորագրություն) | Կ.Տ |
| Կ.Տ | |

Հավելված N 1
<<    >> <<    >> 2015 թ. կնքված
N<<ԲԴ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով
գնման պայմանագրի

# ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
## ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | Ապրանքատեսակի անվանումը | Չափման միավոր | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| | | | |
| 1. | Գլյուկոզ G-col/ Գլյուկոզի որոշման թեստ հավաքածու 200հատ | տուփ | Գլյուկոզա 4x100 մլ (դեպրոտեինիզացված հեղուկ համարժեք :Մեթդ՝Կոլորիմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆորմատ՝400 թեսթ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն , Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8C |
| 2. | Խոլեստերոլ CH LESTEROL/ընդհանուր խոլեստիրինի որոշման թեստ-հավաքածու/ 200հատ | տուփ | Խոլեստերին որոշման թեսթ հավաքածու(Cholesterol): Մեթդ՝Կոլորիմետրիկ: Ֆորմատ՝200 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան /շիճուկ:Ֆիրմային նշանի առկայությունը: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն , Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 3. | Բիլիռուբին Bilirubin/ Ընդհանուր և ուղիղ բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | Ընդհանուր և ուղղակի բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու BILIRUBIN D+T (Human կամ համարժեք): Մեթոդ: ֆոտոմետրիկ (Յենդրաշեկ-Գրոֆի): Ֆորմատ: 2x100մլ: Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայություն:Պահպանման պայմանները 2-8oC: |
| 4. | Միզանյութ Urea-Col/Միզանյութիորոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | Միզանյութ որոշման թեսթ հավաքածու 2x100ml: Մեթոդ: կինետիկ (Urea, uv method): Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայություն:Պահպանման պայմանները 2-8oC: |
| 5. | Կրեատինին CREA-Col/ կրեատինինի որոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | Կրեատինինի որոշման թեստ-հավաքածու CREATININE: Մեթոդ: կինետիկ : Ֆորմատ: 2x100մլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 15-25oC, |
| 6. | Ցոլիկլոն անտի-A/ արյան խմբի 11 որոշման թեստ-հավաքածու | տուփ | Արյան խմբի (II) որոշման տեստ (Цоликлон Анти А կամ համարժեքը) , Մեթոդ: հեմագլյուտինացիա, Ֆորմատ: 10 մլ, Ստուգվող նմուշ: արյուն, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 7. | Ցոլիկլոն անտի-B/ արյան խմբի 111որոշման թեստ-հավաքածու | տուփ | Արյան խմբի (III) որոշման տեստ (Цоликлон Анти В կամ համարժեքը) , Մեթոդ: հեմագլյուտինացիա, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ֆորմատ: 10 մլ, Ստուգվող նմուշ: արյուն, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 8. | Ցոլիկլոն անտի-Սուպեր/rh-D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեստ-հավաքածու | տուփ | rh (D) ռեզուս համակարգի անտիգենի որոշման տեստ , (Цоликлон Анти D Супер կամ համարժեքը), Մեթոդ: հեմագլյուտինացիա, Ֆորմատ: 10 մլ, Ստուգվող նմուշ: արյուն , Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8C |
| 9. | ՌՊՌ-Կարբոն RPR CORBON /սիֆիլիսի որոշման թեստ-հավաքածու 500հատ | տուփ | Սիֆիլիսի որոշման տեստ-հավաքածու (Syphilis RPR-500, Մեթոդ: ֆլոկուլյացիա, սկրինինգի համար, Ֆորմատ: 500 տեստ, Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/ պլազմա, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8C |
| 10. | Ռևմատոիդ ֆակտոր Լատեքս Rematoid faktor-iex/Ռևմատոիդային ֆակտորներիթեստ-հավաքածու 100հատ | տուփ | Ռևմատոիդային ֆակտորների որոշման տեստ-հավաքածու Մեթոդ: լատեքսային ագլյուտինացիա, Ֆորմատ: 5 մլ (100 տեստ), Ստուգվող նմուշ: արյան շիճուկ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն , Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 11. | Թրոմբոպլաստինի որոշման թեստ-հավաքածու 120հատ | տուփ | Թրոմբոպլաստինի որոշման թեսթ հավաքածու (delta THR-120/240):Մեթոդ. Ֆիբրինոգոյացման ժամանակի որոշում, Ֆորմատ: 6x4ml.TS4000, 240 Թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն ,Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 12. | Կալցիումի որոշման թեստ-հավաքածու 500հատ | տուփ | Կալցիումի որոշման թեստ-հավաքածու Calcium _Col Ֆորմատ: 2x50մլ(500թեստ): Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-250C, For In Vitro Diagnostic |
| 13. | Protein-leqs/C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ-հավաքածու 100հատ | տուփ | C-ռեակտիվ սպիտակուցի որոշման տեստ-հավաքածու Մեթոդ: լատեքսային ագլյուտինացիա, Ֆորմատ: 5 մլ (100 տեստ), Ստուգվող նմուշ: արյան շիճուկ, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն , Ֆիրմային նշանի առկայությունը, Պահպանման պայմանները 2-8oC, |
| 14. | Քիմիական ազդանյութեր՝սուլֆոսալիցիլաթթու | գր. | Սպիտակ, մանր ասեղնաձեւ բյուրեղներ կամ թեթեւ բյուրեղական փոշի, անհոտ:Պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն:Պահպանման պայմանները՝պահել չոր տեղում: |
| 15. | Քիմիական ազդանյութեր՝ազուր-էոզին | գր. | Մուգ կապտավուն ներկող հեղուկ:Պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պայմանները՝ պահել չոր տեղում: |
| 16. | Քիմիական ազդանյութեր՝նատրիում ցիտրատ | գր. | Անհոտ , անգույն բյուրեղներ; Պահպանման պայմանները ՝ պահել չոր տեղում: |
| 17. | Քիմիական ազդանյութեր՝աղաթթու/խիտ/ | մլ | Անգույն, թափանցիկ, ցնդող հեղուկ է:Պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն:Պահպանման պայմանները՝պահել չոր տեղում: |
| 18. | Ազոտական թթու | մլ | Անգույն, կամ թույլ դեղնավուն թափանցիկ հեղուկ, ազոտական թթվի զանգվածային բաժինը՝ 70%-ից ոչ պակաս, հրդեհավտանգ, թունավոր, փաթեթվածքը՝ապակյա, պոլիմերային կամ կվարցե շշերով ԳՈՍՏ 11125-84: |
| 19. | Քացախաթթու 5% | գր. | Անգույն հեղուկ է՝ կտրուկ հոտով եւ թթու համով: Պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն:Պահպանման պայմանները՝պահել չոր տեղում: |
| 20. | Ժավել սոլիդ | հաբ | Ժավել սոլիդ - 1կգ-320 հաբ, 1 հաբը -3,2գ, դիքլորիզոցիանաթթվի Na-ական աղ (73,25%), 1,5գ ակտիվ քլորի պարունակությամբ: |
| 21. | Հեքսիանոս Գ+Ռ խտանյութ | լիտր | Հեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1լ հեղուկ - 9.75% դիդեցիլդի-մեթիլամոնիումի քլորիդ, 1% պոլիհեքսամեթիլեն(ՉԱՄ-4րդ սերնդի), գուանիդին, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոռոզիայի ինհիբիտոր, և այլ հավելյալ նյութեր: |

***Գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:**

***Պայմանական նշանները- Տեղափոխումը իրականացնել 0-25C ջերմաստիճանային պայմաններ ապահովելով:**

**Լույսի նկատմամբ խիստ զգայուն նյութերը պահպանել անլուսաթափանց, սև թղթով փաթաթված ապակյա տարայում: Նյութերի պիտակի վրա ''Պահպանել խոնավությունից'' գրառման դեպքում հարաբերական խոնավությունը պետք է լինի ոչ ավելի, քան՝60%: Փաթեթավորված նյութերի փոխադրական տարան պետք է պահպանի մթնոլորտային տեղումներից ու փոշուց, արևի ճառագայթներից և մեխանիկական վնասումներից:**

**Քիմիական նյութերի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝**

**ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող քիմիական նյութերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,**

**բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող քիմիական նյութերը հանձման պահին պետք է ունենան նյութի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը:**

***Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ | ------------------- |
| Ք. Գյումրի Հաղթանակի 25 | ------------------- |
| Հ/Հ 247260002750 | ------------------- |
| Արդշինբանկի Գյումրի մ/ճ | |
| ՀՎՀՀ 05503375 | |
| Տնօրեն՝ Գ. Ալթունյան | ------------------------------- |
| ------------------------------- | (ստորագրություն) |
| (ստորագրություն) | Կ.Տ |
| Կ.Տ | |

Հավելված N 2
<< >> << >> 2015 թ. կնքված
N<<ԲՊ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով
գնման պայմանագրի

# ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
## ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | | | Նախատեսվում է գնել 2015 թ. |
|---|---|---|---|
| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը |
| 1. | Գլյուկոզ G-col/ Գլյուկոզի որոշման թեստ հավաքածու 200հատ | տուփ | 8 |
| 2. | Խոլեստերոլ CH LESTEROL/ընդհանուր խոլեստիրինի որոշման թեստ-հավաքածու/ 200հատ | տուփ | 6 |
| 3. | Բիլիռուբին Bilirubin/ Ընդհանուր և ուղիղ բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | 1 |
| 4. | Միզանյութ Urea-Col/Միզանյութիորոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | 7 |
| 5. | Կրեատինին CREA-Col/ կրեատինինի որոշման թեստ-հավաքածու 200հատ | տուփ | 4 |
| 6. | Ցոլիկլոն անտի-A/ արյան խմբի 11 որոշման թեստ-հավաքածու | տուփ | 2 |
| 7. | Ցոլիկլոն անտի-B/ արյան խմբի 111որոշման թեստ-հավաքածու | տուփ | 2 |
| 8. | Ցոլիկլոն անտի-Սուպեր/rh-D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեստ-հավաքածու | տուփ | 2 |
| 9. | Ռ-ՊՌ-Կարբոն RPR CORBON /սիֆիլիսի որոշման թեստ-հավաքածու 500հատ | տուփ | 1 |
| 10. | Ռևմատոիդ ֆակտոր Լատեքս Rematoid faktor-iex/Ռևմատոիդային ֆակտորներիթեստ-հավաքածու 100հատ | տուփ | 4 |
| 11. | Թրոմբոպլաստինի որոշման թեստ-հավաքածու 120հատ | տուփ | 8 |
| 12. | Կալցիումի որոշման թեստ-հավաքածու 500հատ | տուփ | 1 |
| 13. | Protein-leqs/C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ-հավաքածու 100հատ | տուփ | 4 |
| 14. | Քիմիական ազդանյութեր՝սուլֆոսալիցիլաթթու | գր. | 200 |
| 15. | Քիմիական ազդանյութեր՝ազոպ-էոզին | գր. | 50 |
| 16. | Քիմիական ազդանյութեր՝ նատրիում ցիտրատ | գր. | 200 |
| 17. | Քիմիական ազդանյութեր՝ աղաթթու/խիտ/ | մլ | 50 |
| 18. | Ազոտական թթու | մլ | 100 |

| | | | |
|---|---|---|---|
| 19. | Քացախաթթու 5% | գր. | 200 |
| 20. | Ժավել սոլիդ | հաբ | 960 |
| 21. | Հեքսիանոս Գ+Ռ խտանյութ | լիտր | 2 |

**Գ Ն Ո Ր Դ**

<<Գյումրու Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ
Ք. Գյումրի Հաղթանակի 25
Հ/Հ 247260002750
Արդշինբանկի Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05503375
Տնօրեն՝ Գ. Ալթունյան
--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

------------------
--------------------
----------------------

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
<< >> << >> 2015 թ. կնքված,
N<<ԲՊ-ՇՀԱՊՁԲ-11/15>>
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող
_______________
_______________
գտնվելու վայրը ___________
հհ _______________
_______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը ___________
հհ_______________
_______________
հվհհ_______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _______________________________________________
_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _______________________________________ և Կատարողը՝ ի դեմս_______________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ ________ 20___թ-ից __ ________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.